ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2025 թվականի № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 29.09.2011Թ. ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 06.03.2019Թ. ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 1-ին և 17-րդ ենթակետերով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 29.09.2011թ. որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կանոնակարգը և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի 06.03.2019թ. որոշմամբ հաստատված՝ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի աշխատակարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ք. ԵՐԵՎԱՆ

Հավելված
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
27.03.2025 թ. թիվ 1 որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի (այսուհետ՝ Կրթահամալիր) գիտական խորհրդի (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) կազմի ձևավորման, նիստերի նախապատրաստման և գործունեության կարգը:
2. Գիտական խորհուրդն ունի իր անվամբ կլոր կնիք:

II. Կրթահամալիրի գիտական խորհրդի իրավասությունը

3. Գիտական խորհուրդը լուծում է Կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:
4. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ:
5. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին (այսուհետ՝ Նախարար) առաջարկություն է ներկայացնում Կրթահամալիրի դիմորդների ընդունելության կանոնների վերաբերյալ.

3) մշակում է Կրթահամալիրի սովորողների ավարտական որակավորման պայմանները, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի կանոնները.

4) Կրթահամալիրի ռեկտորին (այսուհետ՝ Ռեկտոր) ներկայացնում է առաջարկություններ դեպարտամենտների, ամբիոնների, կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ.

5) Նախարարին առաջարկություններ է ներկայացնում վճարովի (առանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի) ուսուցման տեղերի թիվը, պետական պատվերով սահմանված տեղերի թվից դուրս, սահմանելու վերաբերյալ.

6) քննարկում է Կրթահամալիրի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում զեկույցներ գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ.

7) Ռեկտորին է ներկայացնում մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկի վերաբերյալ առաջարկություններ՝ նախարարության միջոցով, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար.

8) Կրթահամալիրի գիտամանկավարժական գործունեություն իրականացնող անձանց սահմանված կարգով շնորհում է պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հաստատմանը.

9) սահմանված կարգով հաստատում է Կրթահամալիրի ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարների թեկնածությունները և ատենախոսությունների թեմաները.

10) քննարկում և մշակում է Կրթահամալիրի միջբուհական համագործակցության ծրագրերը.

11) քննարկում և հավանության է արժանացնում ուսումնական պլանները, որոնք ներկայացնում է ուսումնական գործընթացը կազմակերպող և դրա նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանումը.

12) սահմանում է Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության չափորոշիչները.

13) տպագրության է երաշխավորում Կրթահամալիրի հրատարակությունները.

14) կրթության ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ եզրակացություն է տալիս սովորողին ակադեմիական արձակուրդ տրամադրելու նպատակահարմարության մասին.

15) քննարկում է սովորողների՝ վերականգնման մասին դիմումները և համապատասխան միջնորդությամբ նախարարին դիմելու հարցը.

16) ընդունում է Կրթահամալիրի պատվավոր կոչումներ շնորհելու մասին որոշումներ.

17) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ Կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հետ կապված այլ լիազորություններ:

III. Գիտական խորհրդի կազմը

6. Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե ընդգրկվում են Ռեկտորը (Գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, ոստիկանական, ինչպես նաև փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանումների պետերը, նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետի տեղակալը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ընտրովի անդամներ:

7. Գիտական խորհրդի կազմը հաստատվում է Ռեկտորի հրամանով, որով Գիտական խորհրդի անդամներից մեկը նշանակվում է որպես Գիտական խորհրդի քարտուղար:

8. Ոստիկանական ուսումնական ստորաբաժանման խորհուրդը և փրկարար ծառայության ու ճգնաժամային կառավարման խորհուրդը ընտրում են իրենց ստորաբաժանումների հինգական աշխատակից և յոթական սովորող:

9. Ոստիկանական, ինչպես նաև փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանումների պետերն ընտրված թեկնածուներին զեկուցագրով ներկայացնում են Ռեկտորին:

10. Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների աշխատողներին ընտրում են պրոռեկտորները և ներկայացնում են Ռեկտորին:

11. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 50-ը:

12. Ի պաշտոնե նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել Գիտական խորհրդի անդամների 50 տոկոսը:

13. Գիտական խորհրդի անդամների 25 տոկոսը կազմում են Կրթահամալիրի սովորողները:

IV. Գիտական խորհրդի աշխատակարգը և նիստերի նախապատրաստումը

14. Գիտական խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

15. Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են երկու ամիսը մեկ անգամ, արտահերթ նիստերը՝ ըստ անհրաժեշտության՝ Ռեկտորի կողմից կամ Գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջով:

16. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են Ռեկտորը և Գիտական խորհրդի քարտուղարը:

17. Գիտական խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին տեղեկացվում է տվյալ նիստից ոչ ուշ, քան երկու օր առաջ, գրավոր ձևով կամ առցանց գործիքակազմով:

V. Գիտական խորհրդի արտահերթ նիստերի գումարման կարգը

18. Արտահերթ նիստը գումարելու Ռեկտորին ներկայացված գրավոր պահանջը պետք է ձևակերպի Գիտական խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը, դրանց բարձրացման շարժառիթները՝ արտահերթ նիստ պահանջող Գիտական խորհրդի անդամների ստորագրություններով:

19. Գիտական խորհրդի անդամների գրավոր պահանջը ստանալու պահից 7 օրվա ընթացքում Ռեկտորը պետք է ընդունի խորհրդի նիստ գումարելու կամ գումարումը մերժելու մասին որոշում:

20. Ռեկտորն ընդունում է որոշում Գիտական խորհրդի նիստի գումարումը մերժելու մասին, եթե.

1) չի պահպանված արտահերթ նիստը գումարելու պահանջ ներկայացնելու կարգը.

2) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցերից ոչ մեկը չի վերապահված Գիտական խորհրդի իրավասությանը.

3) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

21. Գիտական խորհրդի արտահերթ նիստի գումարումը մերժելու մասին գրավոր ծանուցումն ուղարկվում է խորհրդի նիստի գումարումը պահանջող անդամներին:

VI. Գիտական խորհրդի նախագահի լիազորությունները

22. Գիտական խորհրդի նախագահը՝

1) հաստատում է գիտական խորհրդի նիստի օրակարգը և վարում Գիտական խորհրդի նիստը.

2) ստորագրում է Գիտական խորհրդի որոշումները.

3) գումարում է Գիտական խորհրդի արտահերթ նիստ.

4) կազմակերպում է Գիտական խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ աշխատանքը.

5) սույն կանոնակարգին և նորմատիվ իրավական ակտերին համապատասխան լուծում է Գիտական խորհրդի գործունեության հետ կապված այլ հարցեր:

VII. Գիտական խորհրդի քարտուղարի լիազորությունները

23. Գիտական խորհրդի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Գիտական խորհրդի նիստերը.

2) կազմում է Գիտական խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և այն ներկայացնում է Գիտական խորհրդի նախագահի հաստատմանը.

3) լրամշակման համար հետ է վերադարձնում սահմանված կարգի խախտմամբ ներկայացված որոշումների նախագծերը.

4) Գիտական խորհրդի նիստերի ժամանակ հրապարակում է որոշումների և քննարկվող այլ փաստաթղթերի նախագծերը.

5) Գիտական խորհրդին զեկուցում է ընդունված որոշումների կատարման վերաբերյալ.

6) իրականացնում է Գիտական խորհրդի որոշմամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

VIII. Գիտական խորհրդի նիստերի քվորումը

24. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:

25. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է Գիտական խորհրդի քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում գիտական խորհրդի նախագահի որոշմամբ կարող է գրանցումը երկարաձգվել մինչև քվորումի ապահովումը կամ հետաձգվել նիստը:

26. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

IX. Գիտական խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգը

27. Գիտական խորհրդի նախագահը, բացելով նիստը, հայտարարում է քվորումի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:

28. Գիտական խորհրդի անդամները կարող են որպես ընթացիկ հարց առաջարկել քվեարկության դրվող հարցեր:

29. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը նախագահի առաջարկությամբ որոշում է Գիտական խորհուրդը:

X. Գիտական խորհրդում քվեարկության կարգը

30. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստերին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե Գիտական խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում:

31. Գիտական կոչում շնորհելու մասին որոշումն ընդունվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

32. Փակ, գաղտնի քվեարկությունից առաջ Գիտական խորհրդի որոշմամբ կարող է ստեղծվել հաշվիչ հանձնաժողով՝ Գիտական խորհրդի անդամների կազմից:

33. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկությունները, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը և քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքի մասին և ներկայացնում այն Գիտական խորհրդի հաստատմանը:

34. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստում է Գիտական խորհրդի քարտուղարը՝ մինչև Գիտական խորհրդի նիստը:

35. Քվեաթերթիկում պետք է նշվեն Գիտական խորհրդի նիստի անցկացման ամսաթիվը, տարին, կարգային համարը, քվեարկության դրվող հարցը, քվեարկության տարբերակները (կողմ, դեմ):

36. Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է Գիտական խորհրդի քարտուղարը, հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

37. Քվեաթերթիկը համարվում է վավեր, եթե դրանում քվեարկվել է մեկ տարբերակ:

38. Քվեարկությունից առաջ Գիտական խորհրդի քարտուղարը (կամ հաշվիչ հանձնաժողովի նախագահը) տեղեկություններ է հաղորդում քվեարկության և քվեաթերթիկը լրացնելու կարգի մասին:

39. Հաշվիչ հանձնաժողովի անդամները կամ Գիտական խորհրդի քարտուղարն առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

40. Ձայների հաշվառման արդյունքները հայտարարվում են Գիտական խորհրդի նիստում և հաստատվում են քվեարկությամբ՝ սույն կանոնակարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

XI. Հսկողությունը Գիտական խորհրդի որոշումների կատարման նկատմամբ

41. Գիտական խորհրդի որոշումների կատարումը վերահսկում է Ռեկտորը:

42. Կրթահամալիրի ստորաբաժանումների պետերը պարտավոր են ապահովել իրենց ստորաբաժանմանը վերաբերող՝ Գիտական խորհրդի ընդունված որոշումների կատարումը, ինչպես նաև ներկայացնել Գիտական խորհրդի որոշումների նախագծերի նախապատրաստման կամ կատարման համար անհրաժեշտ՝ Գիտական խորհրդի նախագահի կամ Գիտական խորհրդի քարտուղարի կողմից պահանջվող նյութերն ու տեղեկատվությունը:

XII. Գիտական խորհրդի նիստի արձանագրությունը

43. Գիտական խորհրդի նիստի արձանագրությունը կազմում է Գիտական խորհրդի քարտուղարը՝ նիստն ավարտելուց հետո 3 օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են Ռեկտորը և Գիտական խորհրդի քարտուղարը:

44. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվորումը, նախագահի, Գիտական խորհրդի քարտուղարի տվյալները, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

XIII. Անցումային դրույթներ

45. Գիտական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ:

46. Գիտական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը ընդգրկվում է Գիտական խորհրդի հերթական նիստի օրակարգում:

47. Գիտական խորհրդի կողմից ընդունված կանոնակարգը գործում է մինչև նոր կանոնակարգի ընդունումը: